

ԿԵՆՍՆՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

I.

Կանանց հարցի, նրանց ազատութեան (էմասիպացիա), գործունէութեան, մտաւոր, Փիզիքական յատկառթեան, աշխատանքի, արտաքին, ներքին կեանքի և առհասարակ նրանց հարցի մասին այնչափ խօսուած, գրուած է, որ մի առանձին գրականութիւն է կազմուել։ Եատ նշանաւոր ոյժեր ալդ հարցով զբաղուել և զբառում են։ Կանանց կատարած դերը միշտ և ամեն ժամանակ սերնդի պաշտպանութեան, դաստիարակութեան և ազգայնութեան գործերում ահագին նշանակութիւն է ունեցել. այնպէս որ՝ հէնց նոյն իսկ հին դարերի վիլիսոփաներն ևս ալդ հարցը երբեմն երբեմն շօշափել են։ Ներկալումս կանանց իրաւունքների, պարտականութիւնների չափն ու սահմանն անգամ դէպի ընտանիքը, հասարակութիւնը, պետութիւնը, գիտութիւնը ու աշխատութիւնն ունեցած յարագերութիւնները՝ որոշել են կամ որոշում են։ Ալս հարցերի մասին զանազան երկրների վիճակագրական տեղեկութիւնները պարզ ցոլց են տալիս նրանց դրութիւնը։ Հիմնուելով այլ և այլ հեղինակների փաստերի վերայ, յառաջ բերենք ալդ հարցի էական մասերն իր բոլոր կողմերով և տեսնենք, թէ իշշեալ ինդիրներն ինչ դրութեան մէջ են գտընում ներկալումս Եւրոպայում և Ամերիկայում։ Ինչպէս օրինակ՝ ամուսնութեան, աշխատանքի, տեսակ-տեսակ արհեստների, գործերի, ծառալութեան, դաստիարակութեան, մտաւոր յառաջադիմութեան, բարձրագոյն կըրթութիւն ստանալու և բարոյականութեան մէջ։ Ալդ ժամանակ ահա թերեւս մեզ համար որոշ չափով պարզուել կանանց հարցի էական մասերը և թէ գլխաւորապէս

Բնչ կերպ պէտք է նրանց դաստիարակութեան վերալ
նայենք և Բնչ միջոցներով հասարակութեան շահերի
համար պատրաստենք։ Որովհեակ կանանց բնական և
բուն նպատակն իրանց կեանքի մէջ, համարւում է
մալրութիւնը, իսկ դա ամուսնութեան հետևանքն է,
այդ պատճառով նախ քան միւս հարցերի մէջ մտնելը,
մի քանի խօսքով նրանց ամուսնական դրութիւնն իմա-
նանք քաղաքակրթուած երկրներում։

II. Ամուսնութիւն

Ինչպէս կենդանական աշխարհում ձգտում կալ ի-
րանց տեսակը պահպանել, նրանց տպահովեցնել, այն-
պէս էլ մարդկանց մէջ առաջին և գլխաւոր պարտա-
կանութիւնն է համարւում ամեն հանգամանքի մէջ
սերնդի պաշտպանելը՝ ալսինքն որդիներ ծնել, նրանց
մեծացնել, վտանգներից ազտանել և այդ նոր արարած-
ներին կրթել, դաստիարակել և ալլն։ Առանց տեսակի
պահպանութեան, մարդու հոգեկան բարոյական կրթու-
թիւնն անմիտ կը լինէր, կամ ոչ մի խորհուրդ չէր ու-
նենալ, քանի որ այս բոլորի զարգացումը միայն ան-
հատի մէջ է լինում։ Ահա այս բաները ձեռք բերելու
և պահպանելու համար է ամեն տեսակ քաղաքակրթա-
կան գործադութիւնների հարկաւոր միութիւնները։

Այլ մարդու մշտական և առաջին բնական յատ-
կութիւնն է հայր լինել, իսկ կնոջը՝ մայր։ Հայր լինել
նշանակում է՝ ստեղծել, կեանք տալ և տպա այդ կեան-
քը պահպանել և սննդել։ Մայր լինել նշանակում
է՝ լղանալ, նոր էակ առաջ բերել, նրան ինսամել, Փի-
զիքատիս զարգացնել և դաստիարակել։ Մարդու գոր-
ծողութիւնն աւելի ընտանիքից դուրս՝ արտաքինն է։
սրա հակառակ՝ կնոջ գործունէութիւնը ներսում՝ ըն-
տանիքի մէջ է։ Սա շնորհիւ ամուսնու պաշտպանու-
թեան, սիրած որդեկին խնամում, զարգացնում է իր
կրծքի վերալ, իր գրկի, օրօրոցի և հայրենի օջաղի մէջ։
Նթէ այդպէս է, ուրեմն նշանակում նրա կեանքն էլ
տա հանգիստ, խաղաղ գրութեան մէջ է լինելու, ո-
րովհետև նորատի որդու զարգանալն ու յառաջ գնալն

ալդ է պահանջում։ Հէնց ալս դարեոր ժառանգական դրութիւնն է, որ կնոջ մարմինը քնքոյշ, փոքրիկ, փափուկ և նուրբ կազմութիւն է ստացել։ Հէնց դրա շնորհիւ է, որ նրա զգայութիւնները, հոգեկան դրութիւնները դիւրագրգիռ և աւելի փոփոխական են։ Կնոջ նազուկ մէջքը, շմալ հասակը, թեթև զնչառութիւնը և սովորականից լայն կոնքերը, պարզ ցոյց են տալիս դարաւոր նստակեաց կեանքի հետեանքը։ Այն ինչ՝ մարդու անհանգիստ շարժողութիւնները, մկանունքային, զօրեղ անդամները և լայն կուրծքը խոր շնչառութեամբ՝ իւր ընորոշ արտայալտութիւնն ունի. ահա արտաքին աշխարհում շարքաշ կեանքի հետեանքը։ Կինը ձգտում է դէպի ներքին խաղաղ կեանքը, և այս գլխաւորապէս կապուած է նրա բնտորութեան և կազմուածքի հետ. դրա համար էլ նա այլ մարդու չափազատ չէ։ Նա իւրաքանչիւր ամիս այնպիսի դէպի է ենթարկւում, որից տղամարդն ազատ է։ Մի կողմից նրա 9 ամսուալի կաշկանդուած լղի գրութիւնը, միւս կողմից ծննդաբերութիւնից առաջ գալիք վտանգները, օգնութիւնից զուրկ մանկան ծիծ տալը, խնամատարութիւնը, ամեն մի վտանգից պաշտպանելը և վերջապէս դաստիարակութիւնը, նրան տարիներով կապում, կաշկանդում է։ Ահա ալս ամենազժուար, խիստ մեծ հոգացողութեան կարօտ երաշխաւոր գործերը կնոջ վերայ են դրուած։ Եթէ կանալք բնութիւնից իրանց վերայ դրած պարտականութիւնները կանոնաւոր կատարել կարողանան, այն ժամանակ վստահ կարելի է ասել, որ նրանք ալդչափ գործի մէջ ալլես ուրիշ բան չեն կարող լինել. Հակառակ դէպքում պէտք է կամ իրանց կանացի բնաւորութիւնը բոլորովին փոխեն, և կամ կին լինելուց դադարեն։ Յետոյ կանանց դաստիարակութեան մէջ դեռ կնոջ գործունէութեան մասին աւելի մանրամասն կը խօսեմ, առ ալժմ բաւականակամ սրանով։ Երբ կինն ալսչափ վեհ կոչում և սուրբ պարտականութիւններ ունի, նոյն իսկ բնութիւնից մայր լինելու ձգտումներով օժտուած է, ապա ուրեմն տեսնենք, թէ այդ պաշտօնի համար կոչուածներն արդեօք իրենց նպատակին

ծառալում են: Ուստի դիմենք մի քանի վիճակագրական տեղեկութիւնների, որոնք մեր առաջ ամեն ինչ պարզ կը գծագրեն: Ֆիրկափ (Брандтъ. современная женщина) հաշուետութեան համաձայն, ամբողջ երկրագնդի վերալ տղամարդկանց թիւը կանանցից 15 միլիոնով աւել է. այն ինչ միայն Եւրոպայում կանալք մարդկանցից $3\frac{1}{2}$ միլիոնով շատ են և իւրաքանչիւր երկրում 100 տղամարդու վերալ կանանց թիւը մօտաւորապէս այս չափով աւել է. ինչպէս օրինակ՝ Նորվէգիայում 100 տղամարդու վերալ 30 կին աւել է, Նվէդայում 23, Անգլիայում և Գերմանիայում 21, Ռուսաստանում 8, իսկ Ֆրանսիայում 2: Կանանց և մարդկանց թուերի, մահուան և զանազան հիւանդութիւնների ենթարկուելու համար ևս արդէն բաւականին հետաքրքիր վիճակագրական տեղեկութիւններ կան, որոնք պերճախօս կերպով ցոյց են տալիս նոյնպէս կանանց թուեռաւելութիւնը՝ Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ Եւրոպայում, Ամերիկայում 100 աղջկայ հանդէպ 105 տղայ է ծնւում. Մրան նման է և միւս կիսաքաղաքակիրթ երկրները: Նոյն վիճուկագրութիւնը դարձեալ ապացուցում է, որ չնայելով դրան, տղամարդիկ իրանց մանկական, պատանեկական և արբունքի հասակում աւելի մեծ տոկոս մեռնում են, քան աղջիկները և կանայք: Բացի դրանից կանանց թիւը, բացի մէկ տարեկանից, բոլոր տարիներում տղամարդկանցից շատ են: Առաջ մարդիկ այս տարբերութիւնը պատահականութեան էին վերագրում, բայց ժամանակի ընթացքում կատարուծ փորձերը միշտ ապացուցին, որ դա կախուած է տղամարդկանց մահուան շատութիւնից և կանանց գիմացկոտութիւնը դէպի ամէն մի հիւանդութիւն: Հիւանդանոցներից դուրս բերած վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ կանայք աւելի քիչ են ենթարկում ոսկրացաւի, արիւնհոսութեան, բկուռոյցի և ուղեղային հիւանդութիւնների. չնայելով մի քանի հիւանդութիւնների էլ աւելի են ենթարկում, բայց և այնպէս տղամարդկանցից աւելի քիչ զօհ են տալիս (ՊՏԱԽՈՂՈՐԾ յանդինականութեան գործական առաջարին կանալք աւելի էլ են դիմանում և վերքերից էլ աւելի

շուտ են աղտուում, քան այլ՝ մարդիկ։ Կանալք երկար են ապրում և համեմատաբար աւելի ուշ ծերանում։ Հարդիւրամեալ ծերունիների մէջ կանանց թիւը երկու անգամ աւելի շատ է տղամարդկանցից։ Նոյն իսկ կանանց ձեռքերը, ոտքերն աւելի երկար են ծառալում, քան մարդկանցը։ Կանանց մազերն էլ ուշ են սպիտակում, անգամնըն ուշ գողդողում, աչքերի տեսողութիւնից շատ ուշ գանգատուում։ Նոյնն է լսողութեան, տեսողութեան նկատմամբ։ մի խօսքով կանալք անհամեմատ աւելի համբերող, տանող և կենսունակ են տղամարդկանցից։ Անգլիայում, Իտալիայում և այլ մի քանի տեղերում անտրօպօլօգիկան տեղեկութիւնները հաստատեցին, որ մարմնի մասերի այս կամ այն անգամների խեղաթիւրութիւնների, կորսալմների, վնասներին կանալք աւելի քիչ են ենթակալ, քան տղամարդիկ։ Այսպէս ուրեմն կանանց թիւը շատ լինելով, բնականաբար նրանցից ոմանք պէտք է մնան առանց ամուսնութեան։ Դեռ սա բաւական չէ։ բացի թուերի առաւելութիւններից, ուրիշ շատ հաստրակական պատճառներ կան, որոնց համար նրանք ընտանիք կազմելու բաղդատարութիւնից զրկուած են մնում։ Հենց օրինակ վեր առնենք տնտեսական դրութիւնը, որ գլխաւոր պատճառներից մէկն է համարւում։

Արդէն վիճակագրական տեղեկութիւններն ապացուցել են, որ տնտեսական դրութեան անկման և արտադրութիւնների պակասելու ժամանակ, ամուսնութեան թիւը պակասում է։ այն ինչ սրա հակառակն է պատահում, երբ վերոլիշեալ պարմանները ծաղկած, քառաջ գնացած են լինում։ Օր Գերմանիայում 1871—72 ֆրանս-Պրուսական պատերազմի պատճառով ժողովուրդը բաւականին տնտեսական նեղ դրութեան մէջ ընկաւ և այդ տարին ամբողջ Գերմանիայում 423,200 ամուսնութիւն եղաւ. այն ինչ դրանից 7 տարի յետոյ, չնայելով ազգաբնակութեան բազմանալուն, ամուսնութեան թիւը փոխանակ բարձրանալու, ընդհակառակը շնորհիւ արտադրութիւնների և նեղ տնտեսական՝ դրութեան՝ պակասեց և հասաւ 335,111-ի, թէև մենք հայերս ալդպիսի տեղեկութիւններ չունենք, բս լից և այնպէս իւ-

րաքանչիւր հետաքրքրուող պարզ կը տեսնի, որ մեր գիւղերում հացի, բերքի առատութեան ժամանակ պատկ-ների թիւն անհամեմատ բազմաթիւ են. որա հսկառակ անբերը, երաշտ և օրտանց նման տարիներում, նրանք զգալի կերպով պակասում են, Միևնույն ժամանակ հար-սանիքները սովորաբար աշնան վերջերն են լինում, ալ-սինքն ալնպիսի ժամանակներում, երբ իրանց ապրուստը, ընդհանուր դրութիւնը պարզուած է: Նոյնը կարելի է ասել քաղաքների նկատմամբ: Առհասարակ նկատուած է, որ Եւրոպայում վերջին 20 տարուայ ընթացքում ա-մուսնութեան թիւը հետզհետէ պակասում է, ինչպէս օր. Հոլանդիայում 1000 ից ամուսնում են 165-ր. այս թիւը վերջերը հասաւ 140 ի. Նվելցարիայում 158 ից հասաւ 141-ի. Աւստրիայում 189 ից—167-ի, Բելգի-այում 159 ից—148 ի. Նվեզայում 139 ից—120-ի. Ճեծ Բրիտանիայում 171 ից—146 ի. ալսպէս էլ Գերմանիա-յում և Ֆրանսիայում պակասեց: Ուրեմն երկում է, որ տնտեսական և այլ պատճառների շնորհիւ՝ ամուսնու-թեան թիւն ամեն երկրում հետզհետէ պակասում է:

Մի ուրիշ վիճակագրական տեղեկութիւն էլ ցոյց է տալիս, թէ Եւրոպայում արբունքի հրած երկսեռ անձինք բոլորը չեն կարող ամուսնանալ, այլ համարեա նրանց կէս մասն ամուրի են մնում. մանաւանդ կա-նալք, որոնց թուի շատութիւնն էլ ալդ բանին նպաս-տում է: Այս հասակն առած աղջիկներն իհարկէ ամուս-նանալուց իրանց լուսը չեն կտրում, այլ ընդհակա-ռակն ամեն միջոց գործեն դնում ջտհելների հետ մրցում և որպէս մեծ, կարծես իրանց լաւակնութիւնն են ցոյց տալիս: Ալսպէս կենսանարտի խիստ մրցումն է առաջ գալիս և իհարկէ ուժեղներն ընտանեկան կետն-քից լուժին կստանան: Այս մրցման մէջ փողն ամենից մեծ դեր կատարողն է. որի շնորհիւ մէկէլ լանկարծ թոլլ, հիւանդու, մալրութեան համար միանգամայն անպատճառ և անպէտք աղջիկները աւելի շուտ են վտ-ճառում՝ քան արժանաւոր, երիտասարդ աղջիկները: Վերջինները, իհարկէ, տեսակի պահպանութեան հա-մար՝ առաջիններից աւելի արժէք ունին: Եւրոպական լրագրները թերթելիս, շատ անգամ ալսպիսի բովան-

գակութիւն ունեցող յալտարարութիւններ կտեսնենք։ Այս ինչ ազդիկն այսչափ գումար փող ունի, այսչափ կալուած, այս ինչ այն ինչ առաւելութիւններ և այլն, և ամուսին է որոնում։ Մրանց վերալ երկար ու բարակ կանգնել աւելորդ կը լինի, քանի որ ամուսնութեան համար առանձին լրագրներ կան՝ (Heirats zeitung), որտեղ ազդիկների և կանանց հետ տղամարդիկ ևս իրենց ցանկութիւնները յալտնելով, որոնում են ուներ հարուստ կամ այս ու այն առաւելութիւններ ունեցող ազդիկներ։ Բացի դրանից մեծ քաղաքներում ամուսնութեան համար առանձին գրասենեակներ կան, որոնց միջոցով ամուսնական սակարկութիւններ և վաճառներ են տեղի ունենում։ Եթէ այս ամենի վերալ աւելացնենք և խալտառակ միջնորդները, նոյանց կատարած գործերը, այն ժամանակ պատկերը լիսկատար կը լինի։ Այս միջնորդները որոշ վարձատրութեամբ երկու սեռի կողմից վարձւում են և ամեն տեսակ խարդախ և ստոր միջոցների դիմելով, գործը գլուխ են բերում։ Բազմաթիւ օրինակներից գոնէ մի քանիսն առաջ բերենք։ 1889 թուին մի գերմանացի գնում է Կալիֆորնիա և այնտեղի Գերմանական ու Աւստրիական լրագրներում յալտարարութիւններ է տալիս, թէ ինքը հարուստ, լաւ բաժինք ունեցող ազդիկների համար գերմանացի նշանաւոր անձնաւորութիւնների հետ միջնորդ կարող է լինել և այդ մասին արդէն տեղեկութիւն է տուել գերմանական լրագրներում։ յալտարարութեան հիման վերալ երևան է գալիս մի ազնուական սպալ, և յալտնում է՝ թէ ինքը համաձայն է. միայն հարսնացուն պարտաւոր է իր 60,000 մարկ պարտքը առ և բացի դրանից հետն էլ լաւ օժիտ և փող բերէ։ Մի ուրիշ Աւստրիացի ազնուական այս ցանկութիւնը յալտնելով՝ աւելացնում է, որ ինքը 24 տարեկան է, գեղեցիկ և հարկաւոր դէպքում լուսանկարը կուղարկէ։

Մի գերմանացի ասպետ բաւականին ժամանակ ապրելով Լօնդոնում, յալտարարութիւն է տալիս լրագրներում, թէ ինքը 5 Փուտ, 10 դիւմ հասակ ունի, ծագումով ազնուական, քաղաքագիտական ծառալութեան

մէջ և որ ինքը բոլոր ունեցածը խաղի մէջ տարու ել է՝
ալժմ ալդ պակասորդը լրացնելու համար մի հարուստ
հարսնացու է որոնում։ ծանապարհորդներից մէկն էլ
իր յալտարարութեան մէջ յալտնում է, թէ բացի աղջ-
կայ հարստութիւնից, ցանկանում է նոյնպէս, որ ապա-
գալ ընկերուհին և գեղեցիկ և կրթուած լինի։ Մի
գործարանատէր ցանկութիւն է յալտնում, որ եթէ իր
կինը 400,000 մարկ օժիտ բերէ, այն ժամանակ մի-
այն նրան լիտկատար բաղդաւորութիւն կը խոստանաց-
և ալլն։ Բաւականանանք այս մի քանի օրինակներով,
քանի որ նրանք բազմաթիւ են և ամեն մի ամուսնա-
կան ժերթում դրանց նման յալտարարութիւններ շատ
կան։ Այդ լրագրներում յաճախ պատահում են նոյնպէս
միշին և հաստրակ դասակարգի երկուու անդամների կող-
մից պալմաններ և սուաջարկութիւններ։ — միմիալն հա-
մեմտարար աւելի չափաւոր, աւելի քիչ պահանջնե-
րով։ Նո ինքս մի պարոնի ձեռքում տասնեակներով
օրիորդների չուսանկարներ եմ տեսել. նրանք ալդ պա-
րոնի յալտարարութեան համաձայն՝ իրենց պատկերներն
ուղարկել էին։ Նրանցից մէկը խոստանում էր հաւա-
տարիմ կին լինել, սիրել. միւսը յաւ տանտիկին, որդի-
ներին յաւ կրթող մայր. երրորդը՝ թէ շատ ջահել եմ,
գեղեցիկ և այս ինչ ընտանիքում ծառալել. չորրորդն իր-
ուսման վկայագիրը և ալլն։ Այսպէս, մենք տես-
նում ենք, որ ամուսնութիւնն իր գաղափարական դրու-
թիւնից շեղուելով, ալժմ մեծ մասամբ միալն մարդա-
վաճառութեան ձեւ է ստացել. — մի բան՝ որ ներկաց-
քաղաքակրթուած համալնքներին միմիալն արատ է
բերում. Եթէ մի ըոպէ թողնենք Եւլոպական հասա-
րակութիւնները և մեր փոքրիկ, աղքատիկ կետնքի մի
քանի քաղաքներն ի նկատի ունենանք՝ համարեա նոյն
բաներն աւելի փոքր շափով կը տեսնենք, Ո՞ւմ յալտնի
չեն մացիքուլները, խնամախօսները, միջնորդները...
իրանց կատարած զգուելի կողմերով. մեր փոքրիկ գրա-
կանութեան և մամուլի մէջ բազմաթիւ են նրա վերալ
բերած օրինակները։ Միալն ցաւելով պէտք է նկատենք,
որ ալդ բանն իրանց կրթուած համարող գառակարգի-
մէջ աւելի է նշանարւում, քան նոյն իսկ միջին և ստորին.

դասակարգում. սրանք իրանց կրօնական հասկացողութեամբ շատ անգամ բաւականանում են «բաղդս, ճակատագիրս, Աստուծոյ օրէնքն է» ասելով, և այդպիսով աւելի ընտանեկան կեանքի քաղցրութիւն վայելում, ապրում են, քան այն մարդիկ, որոնց նպատակը ոչ թէ ընտանեկան հանգիստ կեանքը՝ սէրն է եղել, այլ միմիայն փողն ու հարստութիւնը: Իհարկէ՝ աղջկալ փող ունենալուն ոչոք հակառակ չէ, եթէ նա որպէս բաժին, կամ որպէս ժառանգութիւն է ստանում.— ընդհակառակը՝ դա ունի իր օգուտները. բայց ամուսնանալ միմիայն փողի համար, ահա ինչն է՝ որին պէտքէ միանգտմայն հակառակուել:

Ա. մուսնութեան թուի պակասելուն պետութիւններն իրանք էլ այս կամ այն կերպ նպաստում են: Յայտնի է, որ մի քանի պետութիւնների մէջ զինուորական աստիճանաւոր ծառալողները պարտաւոր են որոշ գումար ներկայացնել իրենց մերձաւոր իշխանութեանը, որ նոր ամուսնանայու իրաւունք ունենան: Հենց օրինակ Աւստրիայում 30 տարեկան կապիտանն ամուսնանալու համար պարտաւոր է 24,000 գուլդէն ներկայացնել, իսկ 30 տարեկանից փոքրերը՝ 30,000 գուլդէն. այսպէս էլ միւս աստիճանաւորների վերաբերմամբ: Այս տեսակ գրութեան մէջ ինչ անեն ծառալողները, որ կարողանան ամուսնանալ. Միթէ բընական շպիտի լինէր փողով աղջկներ որոնել և այդ մէտ տեսակ պահանջ, սովորութիւն դարձնել: Նատերը կարող են նկատած լինել որ փողի համար ամուսնացողներն տահասարակ գժուար թէ բաղդաւոր լինեն, այլ մեծ մասամբ աղմկալի կեանք, անհամաձայնութիւն, գժբաղտութիւն և ամուսնալուծութիւն է լինում: Այս ամենի մէջ առհասարակ տուժողը կինն է, քանի որ՝ նոյն իսկ օրէնքով կնոջ իրաւունքը շատ սահմանափակուած է: Այսպէս է ոչ միայն մեզանում, այլ և շատ քաղաքակրթուած և րոպական պետութիւններում: Այս հիման վերալ՝ եթէ վերառնենք հէնց օրինակի համար Պրուսայի փիճակարական տեղեկութիւնները, կը տեսնենք, որ 1883 թ. ամուսնալուծութեան թիւը եղել է 3,577 հատ. 1884-ին 3,856, 1885-ին 3,902, 1886-

ին 3,808 և ալլն։ Նոյնպէս ոչ պակաս տանջանքի են մատնւում չամուսնացողները։ Գեռ մի կողմ թողնենք ապրուստի միջոց ձեռք բերելու գժուար պայմանները և նիւթական նեղ գրութիւնը։ Չամուսնացող տղջկները կենսամարտի մէջ իրենց ոլժերը լարելով և սպառելով, հնարաւորութիւն չեն ունենալ ամենազլիաւոր, բնական, ֆիզիքական պահանջին բաւականութիւն տալ սրա հետևանքը լինում է համեմատաբար շուտով իրանց գրաւչութիւնը, էներգիան ու թարմութիւնը կորցնել։ Բացի գրանից նրանք մի տեսակ ջղալին, կամակոր բարկացիոտ, մուալլ կերպարանք են ստանում։ Մի խօսքով՝ մի տեսակ պատիժ իրանց, ծնողների և շրջապատողների համար։ Վիճակագրական տեղեկութիւններն այս ամենը շատ պերճախօս կերպով ցոլց են տալիս։ Ինչպէս օրինակ 1858 թուին Բաւարայում ամուսնացած կանանց 19% , հոգեկան հիւանդութիւններով էին վարակուած, իսկ չամուսնացած կանանց 81% ը, Պրուսայում 1882 թուին 10,000 ամուրինների վերալ հոգեկան հիւանդների թիւը 33 էր, իսկ ամուսնացողներից 9-ը։ Սակասնիայում մէկ միլիոն ամուրի կանանց վերալ հաշւում է 280 հոգեկան հիւանդներ, նոյն քանակութեամբ ինքնասպաններ։ Իսկ տղամարդկանցից սպանութիւն էին գործել 125-ը։ Պարիզի մի հիւանդանոցում 1,726 հոգեկան հիւանդներից 1276 ամուրի կանանցից էին։

Եթէ չոր ու ցամաք փաստերը մի կողմ թողնենք և հոգեբոլժների, մասնագէտ բժշկների, բարոյագէտ գիտնականների կարծիքներն ի նկատի ունենաք, այն ժամանակ բոլորովին այլ բաներ կը տեսնենք, ինչպէս օրինակ՝ դոկտօր Պլոս իր «Das Weib in der Natur und völker Kunde» գրքի մէջ ցոլց է տուլիս, որ ամուսնութիւնից զուրկ աղջկները շատ զրկանքներ են կը ում։ Նրանք իրանց գեղեցկութիւնը, աշխոլժը, եռանդն ու առողջութիւնը կորցնում են։ Սրա հակառակ՝ երբ նրանք ամուսնութեան շնորհիւ միջոց են ունենում սեռական լարաբերութիւն ունենալու, այն ժամանակ շատ անգամ նրանց մէջ ահագին փոփոխութիւններ են լինում։ Ինչպէս ամուս-

նութիւնից առ ժամանակ յետող նրանց մարմնի կազմը կանոնաւորւում, այսերը լցւում, նախկին վարդագոլն դրութիւնն է ստանում, անպէս էլ աչքերը փալլում և կենդանութիւնը վերականգնում է։ Այսպիսով ամուսնութիւնը նրանց բնական կենդանացուցիչ աղբիւր է համարւում։ Մի ուրիշ նշանաւոր փիլիսոփալ մանկավարժ¹⁾ այդ առթիւ գեղեցիկ կերպով նկատում է, թէ կնոջ ներքին կոչումը մի անհատի սիրել և խնամելն է.—իսկ այդ բնական ձգտումն ամենագեղեցիկ կերպով կը բեղմնաւորի գործնականի մէջ, այսինքն երբ նա մայր լինի։ Այստեղ կինն իր ամենաբարձր գոհացումն կը գտնի, այստեղ նրա ժառանգական բնական ընդունակութիւնը վերջնականապէս կը լրանալ։ Զպսակուած աղջկներն էլ իհարկէ կարող են նոյնպէս ճարպիկ, գործունեալ, օգտակար և բարի լինել. նրանք իրանց պէս-պէս ընդունակութիւններով, տաղանդով, մտցդկանց կարող են օգտակար հանդիսանալ, մինչև անգամ այս կամ այն վեհ նպատակի համար անձնանուիրութիւն ու անձնազոհութիւն ցոյց կը տան։ Դրանով նրանք կարող են մեր խորին յարգանքի արժանանալ և ալլն։ Զնալելով այդ ամենին, բայց նոյնպէս ճիշտ է և այն, որ կեանքի իսկական լրիւ էութիւնը նբանց համար փակ է, քանի որ նրանք ոչ մարդուն և ոչ էլ տղային կարող են ամենամտերիմ կերպով ճանաչել։ Զամուսնանալով, նրանց մէջ գտնուած շատ զգացումներ կարող են անմշակ և անզարգացած մնալ, այն ինչ այդ ընդունակութիւնները գտընանալին կենսատու անձրւի նման կարող են կնոջ բոլոր կոկոնները ծաղկեցնել։ Դրա համար հասակաւոր աղջկը դժգոհ է իրանից, նա իր բուն կոչումից վրիպել է։ Հասակաւոր, ամուրի երիտասարդները լիակատար մարդ չեն կարող համարուել. դրանից է, որ նրանք շարունակ դժգոհ և զառանցող են. սրա հակառակ մարդը և կինը շնորհիւ ամուսնութեան, աւելի կատարեալ, աւելի ամբողջ կը լինեն։ Այստեղ նրանք մէկ-մէկու փոխադարձաբար կը թում, դաստիարակում են. այստեղ նրանք իրար մօտ

¹⁾ Prof. Schultze-Deutsche Erziehung

որպէս հաւասար ընկերներ կանգնում են: Թէև երկուսն էլ շատ բաներով և գործերով իրարից տարրեր են, բայց երկուսի էլ կատարած գործերը մարդկութեան ընդհանուր զարգացման համար հաւասար արժէք ունին: Բոլոր քաղաքակրթական խնդիրների լրացման համար երկուսն էլ աշխատում են և նրանց լուծումը միայն այդ ընդհանուր աշխատանքը կարող է անել: Սպենսերն էլ իր բարոյագիտութեան մէջ չամուսնանալու վնասներն այլ կերպ է դիտում. ինչպէս օրինակ՝ լայտնում է՝ թէ ամուրի կեանքը ևս երկու սեռին էլ մտաւոր վնաս է պատճառում: Բնութեան մեծ մասն իր գործունէութեան ասպարէզը գտնում է ամուսնական և ապա ծնողական լարաբերութիւնների մէջ, իսկ երբ այս ասպարէզը փակ է, բարձր զգացումներից մի քանիսը մնում են անգործ, իսկ միւսներով թէև գործում են, բայց թուլանում են և գանդադում: Ամուրի կեանքը վնասում է նոյնպէս մտածողութեանը. Կը նոյզը և մարդու համար ամուսնական փոխազարձ լարաբերութիւնից մտածողութեան, դատելու մի նոր ասպարէզ է բացւում, միւսնոյնը լինում է կեանքի այս կամ այն հարցի մասին վիճելիս և որոշելիս:

Ամուրի կեանքում ալսպիսի մտաւոր վարժութիւն շատ անգամ չի լինում: Միայն ինկատի է ունենալու, որ ամուսնութեան այս նպաստաւոր ազդեցութիւնը վերաբերում է միայն այն տեսակ պսակուողներին, որոնց կապակցութիւնը հիմնուած է փոխադարձ սիրու վրայ Ալս տեսակետով շահի, առևտրի համար կատարուած ամուսնութիւնն ընդհակառակը, մտաւոր զօրութեաննաւելի վնասում է, քան բարձրացնում:

Բարոյական դատողութեան առաջին դգացումների փոխադարձ ձգտումն է, և այս նպաստում է միութեանը: Ալնտեղ, ուր այդ չկայ՝ բարոյագիտութիւնը բողոքում է զրա դէմ:

Ալդ հարցի մասին շատ հետաքրքրական տեղեկութիւններ է աալիս նոյնպէս պրօֆ. Կրաֆտ Էզինգին իր «Lehrbuch der Psychiatrie» գրքում: Նա ասում է «Կանալը իրանց բնական պահանջով աւելի սեռական կարիք են զգում, քան տղամարդիկ. իսկ այդ բանի

կանոնաւոր միջոցն ամուսնութիւնը կարող է լինել, բայց դրանից, ամուսնութիւնն է նրանց միակ ապահովութիւնը, քանի որ նրանք սերնդէ սերունդ ժառանգար այդ լատկութիւնն ու ձգտումն ստացել են»։ Այսպէս՝ ով չի տեսել՝ որ աղջիկն իր խաղատիկինների հետ խաղալիս՝ իրան մար է երևակալում և նրանց հետ մօր նման խնամող, պաշտպանող և զգալուն կերպով է վարւում։

Ճիշտ է նոյնպէս Վապահի կարծիքը, որ ասում է՝ «Չատ անգամ ամուսնութեան հոգսերից ու զոհաբերութիւններից ազատ ու հանգիստ մնալու համար, տղամարդիկ փախչում են պսակուելուց, բայց նրանք իրանց հաշուի մէջ չտրաչար սխալում են և իրանց երևակալական պաշտպանութիւնն ու հանգստութիւնը չեն գտնում»։ Ամուրիների կեանքն աւելի վտանգի է ենթարկուած, քան որդիների հոգսերին ու զրկանքներին ենթարկուած ամուսնացածները։ Միշտ և ամեն տեղ նկատուած է, որ ամուսնացած մարդիկ աւելի գործնական, խոհեմ, չափաւոր և բազգաւոր են, քան իրանց ընկեր ամուրիները։ Այս բանի համար ճիշտ կերպով նկատում է Եստերլէնը։ — «Բարոյական մարդկանց համար ամուսնութիւնը նրանով է նշանաւոր, որ տղամարդը լինելով կնոջ և ընտանիքի ազգեցութեան տակ, պարտաճանաչութեամբ ոգեւորուելով, ստիպուած լիտ է մնում փչացած կենցաղավարութիւնից և աշխատանքի, չափաւորութեան և ինքնազապողութեան է սովորում»։

Թէև ճշմարիտ, ամուսնական կեանքը լի է հոգսերով, գժուարութիւններով և ամեն ինչ կռուով պէտք է ձեռք բերել, բայց և ալնպէս հէնց դրանք էլ տալիս են կեանքին հետաքրքրութիւն և ազատում են այն տաղտկութիւնից, անբաւականութիւնից և անչափաւորութիւնից։ Որ շատ անգամ ամուրի տղամարդկանց և հասակաւոր օրիորդների հետ պատահում է։ «Մենք մեզ շատ կարող ենք պահել, որ կին ու տղայ էլ պահենք» շատ անգամ լսւում է լուսահատ կերպով երիտասարդների բերանից։ Էլ երկար ու բարակ հաշիւ չեն տալ, թէ որչափ աւելորդ, անտեղի ծախսեր են անում, քա-

նի քանի անգամ իրանց շրջապատող տաղտկութիւնից ազատուելու համար գիմում են այս կամ այն զուարձալի միջոցների, որոնք առ ժամանակ իրանց թմբեցնելով՝ բաւականանում են. այն ինչ այդ աւելորդ ծախսեւով նրա հետ կապը էր և ընտանիքը և ուղիքը: Ամուսնութիւնը բացի այն, որ նեարդային համակարգութեան վերալ բարերար ազգեցութիւն կը թողնէ, այլ և հաճելի ընտանեկան կեանքի զգացմունքը միայն իր անձի վերայ խնամք տանելը կը հեռացնէ՝ մասամբ տնային հոգսերի, մասամբ էլ ամուսինների միմեանց հետ ունեցած հոգեկան յարաբերութիւնների շնորհիւ. վերջապէս նշանաւոր է և այն զգացմունքը, որ կինն իր ամբողջ կեանքի համար մի նեցուկ է գըտնում, նեցուկ՝ որ միմիայն նրան ոլժ տուող աղբիւր կը դառնայ: Որովհետև ամուսնութեան նպատակն է մարդկացին ցեղի աճումը, ուրեմն ամուսինները պարտաւոր են նոյնպէս իրանց մարմնի ամրապնդութեան մասին հոգ տանել, որպէս զի նրանց սերունդն առողջութեան դրօշմ կրէ և ուրախութեան աղբիւր լինի. Նատ անգամ էլ կանանց այս դրութիւնն իրանց գիտակից կամ անգիտակից կերպով մղում է դէպի դժուհութիւն, տրտունջ, թախծութիւն և դրա համար էլ երեմն նրանք իրանցից, շրջապատողներէց տրտնջում, դժուհում են: Այսպիսի դրութեան մէջ շատերը ցանկանում են միտիկականութեան մէջ բաւականութիւն գտնել. բայց ինչ բանի էլ որ դիմեն, ամենն էլ կզուր է, որովհետև դրանցից հետզհետէ տեսակ տեսակ զղալին հի: անդութիւններ են առաջ գալիս. ինչպէս՝ խտելիկա, խելազարութիւն և ալլն: Ահա սրանով բացարւում է այն փաստը, որ ամուրի կանանց խելագարութեան ամենամեծ տոկոսը լինում է 25—30 տարեկան հասակում. այսինքն մի այնպիսի շրջանում, երբ նրանց ծաղիկ հասակը իւրեանց կեանքի լոլսերով չքանում, ոչնչանում է: Այն ինչ տղամարդկանց մէջ գժութեան դէպքերն աւելի պատահում է 35—80 տարեկան հասկում, այսինքն մի այնպիսի ժամանակամիջոցում, երբ կենսամարտը իւր գագաթնակէտին հասած վերջացած է:

Ամուսնութիւնն Ամերիկայում բոլորովին այլ կերպ է: Եւրոպայում հազոււգիւտ է առանց օժիտի, փողի ամուսնանալ, սրա հակառակ՝ Ամերիկայում համարեա ոչ մի աղջիկ փող, օժիտ չի տանում, մինչւ անգամ ամենահարուստ միլիոնատէր ծնողներն ևս աղջիկներին օժիտ չեն տայ, բացի պսակուելուց յետոյ կատարած ճանապարհորդութեան ծախսից:

Մի խօսքով ամուսնութեան ժամանակ աղջիկների նիւթական դրութիւնն ալնքան դեր չի կատարում: Այդ բանը պատահում է, երբ ևրոպացու հետ է ամուսնանում: Ոյստեղ երկու երիտասարդ պսակուողներ: ըստ վաղօրօք իրար հետ ծանօթանալով՝ յարմարուում, հաւանում և ապա կապում են, պէտք է ասել, որ երկուոն էլ իրանց ուժերի վրայ են վստահացած: Ամերիկայում աղջիկը պարզօրէն տեսնում է, որ տղան իրան է ցանկանում, և ոչ թէ երոպացի աղջկալ նման կասկածանքով է վերաբերում, թէ փողի կամ մի այլ օդտի համար է պսակուում:

Եւրոպացու և ամերիկացու մէջ եղած մի խոշոր տարբերութիւնն էլ հետևեալն է: Խնչակս տեսանք՝ Եւրոպայում մեծ մասամբ ամուսնութիւնը գլուխ է գալիս մի երրորդ՝ միջնորդ մարդու մասնակցութեամբ, այսինքն՝ ազգականների, ծնողների, խնամախօսների ևալին. այն ինչ Ամերիկայում ալդպէս չէ. այլ երկու նշանադրուողներն իրանք են այդ ընտրութիւնն անում, առաջուց իրար հետ տեսնեում, մէկ-մէկու ընտրութիւնը կանոնաւոր տնդղում և յարմարատւոր դէպքում միայն խօսք տալիս, մանաւանդ աղջիկն ինքն է որոնում իր ապագայ ընկերակիցը: Անշուշտ ալստեղ էլ բացառութիւններ պատահում են, ալստեղ էլ երբեմն աղջիկները բաղդախնդիրներին, գօնժուաններին զոհ են, զնում: միայն այն տարբերութեամբ, որ միշտ և ամեն ժամանակ աղջկալ կողմն է հասարակաց կարծիքը և օրէնքի դատավճիռը: Այս կողմից ևս նոր աշխարհի վարքն ու բարքը Եւրոպայից տարբեր է, ուրիշ խօսքով տղալին ստիպում են կամ իրանից եղած որդուն պտահել և կամ աղջկալ հետ ամուսնանալ, քանի որ նա իրան թոյլ է տուել նրա պատիւն արատելու. կամ թէ-

չէ տղալին խիստ պատիժների և մեծամեծ տուգանք ների են ենթարկում։ Ամերիկալի ամուսնացած կինը նոյն յարգն ու պատիւն ունի թէ դրսում և թէ հասարակական զանազան ժողովներում, շոգենաւներում, երկաթուղիներում։ և նրանց տեղ, յարմարութիւններ տալիս։ Այսպիսի հանգամանքներում ամերիկուհին ոչ թէ ամուսնու կարևորութիւն չի զգալ, ալ շատ անգամ իր շնորհիւ ամուսինը ևս ալդ յարմարութիւններից օգտառում է։ Պրօֆ. Նանժուլին իր Եւ ՊՈԱՏԿԱԽԵ լցուացո նցացացո աշխատութեան մէջ հիմնուելով ամերիկական վիճակտրական տեղեկութիւնների վրա գուրս է բերում՝ որ 17,427 բանուորուհիների միջից 15,387 ը աղջիկներ են եղել, 1538 այրիներ և միայն 746 ը ամուսնացած։ Սրտնից պարզ երևում է, որ ամուսնացածները մեծ մասամբ ընտանիքին են պատկանում և ոչ գործարաններին կամ արհեստանոցներին։ Նա տեղեկացնում է նոյնպէս, թէ ալդ աղջիկները միայն 14 տարեկանից իրաւունք ունին ալդպիսի աշխատանքների մէջ ընդունուել, և ալդ տևում է մինչև 25 տարեկան հասակը։ այնուհետև նրանց թիւը պակասելով մինչև զէրօյի է հասնում։ Ուս նշանակում է, թէ կամ նրանք ամուսնանում են և կամ իրաւունք չունին ալլևս ալդպիսի տեղերում գործելու։ Ամերիկուհին հակառակ եւրոպացի կնոջ, ոչ թէ իր որդիները, ընտանիքը բաղդի բերմունքի է թողնում, ալ և իր ոլժերը նրան է զոհում և նրա բարօրութեան համար աշխատում։

Պատահում են ամերիկուհիք, որոնք խնալողութիւնից, ծնողներին օգնելու դրդումից և կամ թէ ապագալ ամուսնական կեանքի համար մի քանի տարի ևս աշխատում են ալդպիսի տեղերում։ Մի խօսքով ամերիկուհին, իր ամուսնութեան մէջ բաղդաւոր է ոչ թէ միայն իր ազատ ընտրութեամբ, հասարակաց կարծիքով, ալ և օրէնքի պաշտպանութեամբ։ Ալդ օրէնքն է, որ աղջկան իր թուլութեան և անփորձութեան համար պաշտպան է հանդիսանում, իսկ ամուսնացածին մարդու բռնութեան և անսարդարութեան դէմ։ Եթէ մենք զանազան երկրների ամուսնալուծութեան հար-

ցերն ի նկատի ունենանք, այն ժամանակ պարզ կը տեսնենք, թէ ինչպէս օրէնքով ամերիկական ընտանիքի պատիւը պաշտպանուած է. օրինակ՝ այստեղ ամուսնալուծիւնիւնը, կարող են առաջ բերել անառակութիւնը, խելագարութիւնը, երկրորդ կին ունենալը, ճ տարուայ ամուսնանայտութիւնը, արական անկարողութիւնը ևալլն: Դեռ այդ բաւական չէ, օրէնքն ամերիկուհուն պաշտպանում է ամուսնալուծութիւնից լետոյ ևս. — որ եթէ կինն ամուսնուց բաժանուել է նրա զգուելի, ատելի արարմունքների համար, այն ժամանակ դատարանն ամուսնուն պարտաւորեցնում է տարեկան որոշ հասոլիթ տալ կնոջը, — մինչև անգամ կինը եթէ կարիք էլ չունենալ, այնուամենայնիւ որպէս պատիժ, նա պարտաւոր է օրէնքի առաջ խոնարհուել: Պատահում են կանալք, որ մի քանի ամուսիններից այդպիսի հասոլթներ են ստանում, իսկ եթէ բաժանուած ամուսինները ժամանակին ալդ չը հասցնեն նշանակած տեղը՝ այն ժամանակ կնոջ բողոքով ամուսինը նորից կը բանտարկուի, դատի կենթարկուի, և որպէս պատիժ պարտաւոր է բոլոր դատարաննական ծախքերը հոգալ: Այս ամենից լետոյ օրէնքն ալսպիսիններին այնպիսի խստութեամբ է հետևում, որ ոչ մի ամուսին թոյլ չկտայ այդպիսի միջոցների դիմելու: Ասածներիցս պարզ երեւում է, որ ամերիկական կնոջ դրութիւնն անհամեմատ բարձր է իր եւրոպական ընկերուհուց. թէ ինչու, այդ մենք լետոյ կը տեսնենք:

Ա. ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆ

(Կը շարունակուի)